«ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» ՌԱՑՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 2022-2024 ԹԹ.

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ԽԹԱՆԵԼ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ՝ ՀԱՆՈՒՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻՑ ԶԵՐԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

Կանխարգելել կոռուպցիան՝ կառավարման գործընթացների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և բարեվարքությունը խթանելու միջոցով

Նպաստել իրավունքի գերակայությանը՝ պատշաճ իրավակիրարկմանը, արդարադատության հաստատմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը հետամուտ լինելու միջոցով

Պաշտպանել հանրային ռեսուրսները հանրային գույքի ու ֆինանսների պատասխանատու կառավարմանը և հանրությանը մատուցվող ծառայությունների արդյունավետությանը նպաստելու միջոցով

Խթանել օրինավորությունը քաղաքականության մեջ ազատ և արդար ընտրությունների կայացմանը և քաղաքական համակարգի կատարելագործմանն աջակցելու միջոցով

Խթանել քաղաքացիական առաջնորդությունը՝ գիտելիք տարածելու, քաղաքացիական տարածքը պաշտպանելու և հանրության ներգրավման հնարավորություն ստեղծելու միջոցով:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

2022-2024 ԹԹ. ՌԱՁՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

- Աջակցել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը
- Աջակցել կոռուպցիոն ռիսկերը կանխարգելող օրենսդրության մշակմանը
- Խթանել հանրային ոլորտում բարեվարքության ինստիտուտների և կոռուպցիան կանխարգելող մեխանիզմների կայացմանը

ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿԻՐԱՐԿՈՒՄ

- Հետամուտ լինել իրավակիրառ պրակտիկային
- Աջակցել քաղաքացիներին հանրային շահի պաշտպանության գործընթացներում
- Հետամուտ լինել ապօրինի գույքի վերադարձի և պատասխանատվության ենթարկման գործընթացին

ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նպաստել հանրային ունեցվածքի (այդ թվում՝ բնական ռեսուրսների) արդյունավետ, թափանցիկ և հաշվետու կառավարմանը
- Նպաստել հանրային ֆինանսների արդյունավետ, թափանցիկ և հաշվետու կառավարմանը
- Նպաստել հանրային ծառայությունների որակի բարելավմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

2022-2024 ԹԹ. ՌԱՁՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Նպաստել ազատ և արդար ընտրությունների իրականացմանը
- Աջակցել կուսակցությունների ինստիտուտի կայացմանը և թափանցիկության բարելավմանը

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ

- Խթանել քաղաքացիական ու հակակոռուպցիոն գիտելիքը և արժեքների ձևավորումը
- Նպաստել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների իրավական ու գործնական միջավայրի բարելավմանը
- Նպաստել հանրային մասնակցության ինստիտուտի բարելավմանը
- Խթանել քաղաքացիական հասարակության զարգացումը Արցախում

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Թեև կոռուպցիան՝ ըստ միջազգային փորձագիտական գնահատականների, նվազել է, այդուհանդերձ կարևոր հիմնախնդիր է մնում բարեվարքության ինստիտուտների ոչ լիարժեք գործարկումը, հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն դրսևորումները և ռիսկերը, կոռուպցիայի դեմ պայքարի ընտրողական մոտեցումը և որոշումների չհիմնավորված և ոչ թափանցիկ կայացումը, ինչպես նաև հանրային վերահսկողության պակասը:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹԻՀԿ-ը ձգտում է աջակցել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության և կոռուպցիոն ռիսկերը կանխարգելող օրենսդրության մշակմանը, ինչպես նաև խթանել հանրային ոլորտում բարեվարքության ինստիտուտների և կոռուպցիան կանխարգելող մեխանիզմների կայացմանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ակնկալում ենք հասնել հակակոռուպցիոն ոլորտի օրենսդրական դաշտի բարելավմանը, կոռուպցիայի հակազդման միջոցառումների ծրագրերի մշակմանն ու իրականացմանը և հակակոռուպցիոն նոր ռազմավարության մեջ ԹԻՀԿ նախանշած ուղղությունների ներառմանը:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿԻՐԱՐԿՈՒՄ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Թեև վերջին տարիներին կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ մի շարք օրենսդրական ակտեր են ընդունվել, դրանք հաճախ մնում են թղթի վրա՝ համապատասխան կարողությունների, քաղաքական կամքի, ընտրողական վերաբերմունքի պատճառով: Իրավակիրարկման խնդիր կա նաև գողացված ակտիվների վերադարձի ապահովման, համապատասխան սանկցիաների կիրառման գործընթացում:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹԻՀԿ-ը ձգտում է բարելավել իրավակիրառ պրակտիկան, աջակցել քաղաքացիներին հանրային շահի պաշտպանության գործընթացներում և հետամուտ լինել ապօրինի գույքի վերադարձի և պատասխանատվության ենթարկման գործընթացին:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ակնկալում ենք հասնել իրավական կարգավորումների լիարժեք կիրարկմանը, հանրային շահի վերականգմանը, վերադարձված գումարների աճին և մեղավորների նկատմամբ պատժամիջոցների կիրառմանը:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Հանրային ռեսուրսների, այդ թվում՝ հանրային ֆինանսների կառավարումը բազմաթիվ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում, ուստի այս ոլորտում արդիական խնդիր է մնում հանրային ռեսուրսների , այդ թվում՝ հանրային ֆինանսների ողջամիտ կառավարման մասնակցայնության, թափանցիկության և հաշվետվողականության պակասը, հանրային ծառայությունների ցածր որակը և այս ոլորտում կոռուպցիոն դրսևորումները, հանրային վերահսկողության պակասը:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹԻՀԿ-ը ձգտում է նպաստել հանրային ունեցվածքի (այդ թվում՝ բնական ռեսուրսների) արդյունավետ, թափանցիկ և հաշվետու կառավարմանը, հանրային ծառայությունների որակի բարելավմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ակնկալում ենք հասնել հանրային ռեսուրսների ողջամիտ կառավարմանը և հանրային ծառայությունների մատուցման որակի բարելավմանը, ինչպես նաև բյուջետային գործընթացի և գնումների օրենսդրության և դրա կիրարկման բարելավմանը, ավելի հաշվետու, մասնակցային, արդյունավետ և թիրախային բյուջետավորմանը, հանրային գնումների վերաբերյալ բաց տվյալների ֆորմատով տեղեկատվությանը, ինչպես նաև հանրային ծառայության ոլորտի օրենսդրության բարելավմանը և կոռուպցիոն դրսևորումների և ռիսկերի նվազմանը:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Ընտրությունների ընթացքում օրինախախտումների պրակտիկան ընդհանուր առմամբ նվազել է, սակայն արդիական են մնում վարչական ռեսուրսների չարաշահման, ճնշումների և մի շարք այլ հարցեր: Տարիների ընթացքում ձևավորված ավտորիտար ավանդույթները չեն նպաստել այլընտրանքային քաղաքական կուսակցությունների կայացմանը, իսկ վերջիններիս ֆինանսավորման աղբյուրների թափանցիկության պակասը բացասաբար է անդրադառնում հանրության կողմից կուսակցությունների նկատմամբ վստահության վրա:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹԻՀԿ-ը ձգտում է նպաստել ազատ և արդար ընտրությունների իրականացմանը, կուսակցությունների ինստիտուտի կայացմանը և թափանցիկության բարելավմանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ակնկալում ենք, որ ընտրություններն անց կացվեն Ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ ճնշումների և վարչական ռեսուրսի չարաշահումների հնարավորինս նվազեցմամբ: Բացի այդ, ակնկալում ենք հասնել կուսակցությունների ֆինանսավորման տվյալների հանրային հասանելիությանը և կուսակցությունների ղեկավար մարմիններում որոշումների ընդունման թափանցիկ և հաշվետու գործընթացին:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում համակարգային խնդիրները մեծապես պայմանավորված են հանրության շրջանում իրազեկվածության ու քաղաքացիական ակտիվության ցածր մակարդակով, որոշումների կայացմանը քաղաքացիների իմաստալից մասնակցության մեխանիզմների ու դրանց կիրակման բացերով: Իրավական ու գործնական նպաստավոր միջավայրում գործող և զարգացած քաղաքացիական հասարակությունը լավ կառավարման ու ժողովրդավարության կայացման կարևորագույն հիմնասյուներից է՝ թե՛ Հայաստանում և թե՛ Արցախում:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԹԻՀԿ-ը ձգտում է խթանել քաղաքացիական ու հակակոռուպցիոն գիտելիքը և արժեքների ձևավորումը, նպաստել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների իրավական ու գործնական միջավայրի և հանրային մասնակցության ինստիտուտի բարելավմանը, ինչպես նաև խթանել քաղաքացիական հասարակության զարգացումը Արցախում:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ակնկալում ենք հասնել ԹԻՀԿ լսարանի ընդլայնմանը, գիտելիքի տարածմանը, հակակոռուպցիոն պայքարում ԹԻՀԿ-ի կողմից վերապատրաստում անցած երիտասարդների ազդեցության ավելացմանը, ՔՀԿ միջավայրի գնահատականի բարելավմանը, ինչպես նաև Արցախում ՔՀԿ-ների և ակտիվ խմբերի ավելացմանը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հաստատում է ինչպես սույն ռազմավարությունը, այնպես էլ ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված գործունեության վերաբերյալ Գործադիր տնօրենի հաշվետվությունները:

ԽՈՐՀՈՒՐԴ

Մասնակցում է ռազմավարության մշակմանը և ներկայացնում է այն Ընդհանուր Ժողովի հաստատմանը, ինչպես նաև ի գիտություն է ընդունում ռազմավարության իրականացմանն ուղղված տարեկան գործողությունների պլանները և հավանության արժանացնում դրանց կատարման հաշվետվությունները:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

Ապահովում է ռազմավարական նպատակների իրագործմանն ուղղված գործողությունների պլանի կատարումը և ներկայացնում դրա իրագործման վերաբերյալ հաշվետվություն խորհրդին, ինչպես նաև ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված գործունեության վերաբերյալ հաշվետվություններ Ընդհանուր ժողովին:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Մասնակցում են ռազմավարական պլանի և հարակից փաստաթղթերի մշակմանը, իրականացնում են ռազմավարական նպատակների իրագործմանն ուղղված, տարեկան աշխատանքային պլաններով սահմանված գործողությունները և դրանց ընթացքի վերաբերյալ պարբերաբար հաշվետվություն ներկայացնում՝ ըստ սահմանված կարգի:

www.transparency.am
www.facebook.com/TIArmenia
(+374 10) 569589, 569689
info@transparency.am

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն